

ԿԱԼԻԴԱՍԱՅԻ «ԱՄՊ-ԱՎԵՏԱՐՆԸ» ՊՈԵՄԻ

ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

ՎԱՐԱԳԱՆՈՒՇ ԱՌԱՔԻՅԱՆ

Հին հնդկական պրականությունը բաղմաթիվ անզուգական գոհարներ է պարգևել մարդկությանը՝ Վեդաները (մ. թ. ա. II հազարամյակի վերջ—I հազարամյակի սկիզբ), անմահ էպոսները՝ «Մահաբհարատան» և «Խամայանան» (մ. թ. ա. I հազարամյակի վերջ), հեքիաթների ու առակների ժողովածուները՝ բնդգրկում են հնդիկ ժողովրդի մտքի ու հոգու անսպառ հարստությունները:

Մեր թվարկության սկզբին անհեղինակ, բանահյուսական խոսքարվեստին փոխարինելու է գալիս հեղինակային, անհատական ստեղծագործությունը՝ IV—V դդ. հանդես է գալիս Կալիդասան՝ հին հնդկական գրականության մեծագույն ներկայացուցիչը, որի ստեղծագործությունը ներշնչանքի աղբյուր է եղել այնպիսի տիտանների համար, ինչպիսիք են Գյոթեն և Ռաբինդրանաթ Թագորը: Կալիդասային հաստատապես վերագրում են երեք դրամա և չորս պոեմ, որոնցից հատկապես փառաբանված են «Շակունտլա» դրաման և «Ամպ-ավետաբեր»¹ պոեմը:

Անդրադառնալով Կալիդասայի «Ամպ-ավետաբեր» պոեմին, մեր նպատակն է վերլուծել նրա առավել բնորոշ և հետաքրքիր երկու բաժինների շարահյուսական կառուցվածքը:

«Ամպ-ավետաբեր» պոեմը բառատողային կառուցվածք ունի: Այն բաղկացած է 2 մասից, գրված է «մանդակրանտա» կոշվող շափով: Պոեմի տան յուրաքանչյուր տողը կազմված է 17 վանկից՝ երկար ու կարճ վանկերի որոշակի ու միատեսակ հաջորդականությամբ, անհավասար ոտքերով: Տողն ունի երկու հատած՝ 4-րդ և 10-րդ վանկերից հետո:

Պոեմի առաջին մասը կազմված է երկու բաժնից: Առաջին բաժինը ելակետային իրադրության նկարագրությունն է և պոեմի թեմայի համառոտ ուրվագիծը (1—13 բառատողեր), երկրորդ բաժինը (14—63 բառատողեր)՝ Խամպիի լեռան գագաթից մինչև դիցաբանական Ալակա քաղաքն ամպի անցնելիք մանապարհի նկարագրությունը:

Պոեմի երկրորդ մասի առաջին բաժնում (64—76 բառատողեր) տրվում է Ալակայի և այն հատուկ նշանների նկարագրությունը, որոնց օգնությամբ կարելի է ճանաչել պոեմի հերոսի՝ յակշա-կիսաստվածի կացարանը: Երկրորդ բաժնում (79—94 բառատողեր) նկարագրվում է յակշայի կինը, և վերջին բաժնում (95—111 բառատողեր)՝ յակշայի ուղևորը:

«Ամպ-ավետաբերի» բաժիններն իրենց հերթին մասնատվում են հատվածների, որոնք բնութագրվում են ինչպես միկրոթեմայի փոփոխությամբ, այնպես էլ շարահյուսական կառուցվածքով և տների շղթայակցման առանձնահատկություններով:

¹ «The Megha-Dūta of Kalidasa», critically edited by Sushil Kumar De. Sahitya Akademi, New Delhi, 1957: Պոեմի թարգմանությունը տե՛ս «Գաղուն», 1979, № 4:

Պոեմի շարահյուսական կառուցվածքի վերլուծության ժամանակ հետապնդել ենք երկու հիմնական նպատակ. ա) հետազոտել քառատողերի միջև գոյություն ունեցող շարահյուսական կապերի տեսակները, բ) ցույց տալ քառատողերը միավորող առանձին հատվածների սահմանները:

Վերլուծությունը կատարել ենք հետևյալ սկզբունքներով.

1. Պոեմի քառատողերը համընկնում են Ս. Ի. Գինդինի մշակած «բլոկ» հասկացության հետ². Բլոկը նախադասությունն է կամ նրա մի մասը, կամ նախադասությունների խումբը: Քառատողը մեկ համար հաշվարկման միավոր է, որովհետև նույնիսկ այն ժամանակ, երբ այն մեկից ավելի նախադասությունների ամբողջություն է, քառատողերի միջև եղած կապերի ձևերը որոշելիս հազվադեպ է պահանջվում վերլուծել նաև քառատողերը կապմող նախադասությունների միջև եղած կապերը: Դա բացատրվում է նրանով, որ քառատողի ոչ բոլոր նախադասություններն են միատեսակ դեր կատարում պոեմի գործողության հետագա զարգացման համար: Դա հատկապես վերաբերում է այն նախադասություններին, որոնք ընդհանրացնող շեղում՝ կամ ասույթ են բովանդակում: Այդ իսկ պատճառով քառատողերի ներքին կառուցվածքը վերլուծում ենք միայն այն դեպքում, երբ այդ վերլուծությունն օգնում է քառատողերի միջև եղած կապերը, հարևան քառատողերի կառուցվածքի համանմանությունը բացահայտելուն, և դրանով իսկ թույլ է տալիս պարզ պատկերացնել հատվածի կառուցվածքը: Այսպիսով, հիմնականում հետազոտում ենք միջտնային կապերի տեսակներն ու բնույթը:

2. Միջտնային կապերի բնույթը որոշելիս օգտվում ենք շղթայական և զուգահեռ շարահյուսական կապերի հասկացությունից: Շղթայական է կոչվում այն շարահյուսական կապը, որ ապահովվում է հարևան բլոկի որևէ բառի կամ բառերի խմբի կրկնությամբ: Այդ կրկնությունը կարող է լինել բառային, համանշային, դերանվանական, մակբայական և այլն: Օրինակ՝ Նս վեցբեցի գղալր: Այն փայտից էր: Այստեղ գղալ բառի դերանվանական կրկնությամբ (այն) երկրորդ նախադասությունը շղթայակցվում է առաջինին:

Որժամանակ օգտագործում ենք կապող ցուցիչ հասկացությունը: Իրենա Քելերտը կապող ցուցիչները համարում է «տեքստի ամենաականջատ կապող կամ կցող տարրերը»³: «Դրանք են, օրինակի համար, հատուկ անունները, անձնական դերանունները, որոշ մակբայներ և ցուցական դերանուններ (այստեղ կամ այս տեղում, այնտեղ կամ այն տեղում), գոյականները, ինչպես նաև՝ դերանուններով սկսվող անվանական խմբերը»⁴: Վերը բերված օրինակում կապող ցուցիչ է այն դերանունը:

Բլոկների միջև զուգահեռ կապի դեպքում դրանք լինում շղթայակցվում մեկը մյուսին, այլ համադրվում (զուգադրվում) են, որի ժամանակ, կառուցների զուգահեռության հետևանքով, կախված կառույցի բառային «լիցքից» (наполнение), հնարավոր է համադրություն կամ հակադրություն⁵:

2 С. И. Гиндин, Онтологическое единство текста и виды внутритекстовой организации («Машинный перевод и прикладная лингвистика», вып. 14, М., 1971, с. 120).

3 Ирена Беллерт, Об одной условии связности текста («Новое в зарубежной лингвистике», М., 1978, с. 185—186).

4 Նույն տեղում:

5 Г. Я. Солганик, Синтаксическая стилистика, М., 1973, с. 132.

3. Նախադասությունների կապակցումը կատարվում է ոչ միայն կապող ցուցիչների, այլև իմաստային-քերականական հարաբերությունների միջոցով: Ինքնուրույն նախադասությունների միջև գոյություն ունեն նույն ժամաստային հարաբերությունները (թվարկման, հիմունքի, պատճառի, հետևանքի, ժամանակի, պայմանի), ինչ և բարդ նախադասության ներսում, թեև ոչ այնքան պարզորոշ արտահայտված:

4. Տները միավորվում են հատվածների մեջ: Սրանք գերշարահյուսական միավորներ են, որ ունեն ընդհանուր թեմա և կադմված են միջտնային կապերով միավորված տներից: Հատվածի սահմանները բնորոշվում են միջտնային կապերի ուժգնության թուլացումով կամ դրանց բնույթի փոփոխությամբ: Հատվածներն էլ արդեն միավորվում են բաժինների մեջ, որոնց մասին հիշատակել ենք:

5. Վերլուծության համար օգտվում ենք հաղորդման առարկա⁶ հասկացությունից, որն օգնում է կապի բնույթը բացահայտելուն: Հաղորդման առարկա ենք անվանում այն հիմնական առարկաներն ու երևույթները, որոնց մասին խոսվում է քառատողում: Նայած թե հաղորդման առարկան դառնում է տները կապող ցուցիչ, թե ոչ, տարբեր է լինում միջտնային կապերի բնույթը: Հաղորդման առարկան կարող է փոխվել հատվածի սահմաններում, ինչպես և նույնը մնալ մի քանի հատվածի ընթացքում: Լեյդ առումով տարբերում ենք առաջին, երկրորդ և այլն հաղորդման առարկաներ: Օրինակ՝ ամպի ճանապարհորդությունը նկարագրող ամբողջ բաժնի ընթացքում հաղորդման առարկաներից մեկը՝ ամպը, չի փոխվում, միաժամանակ հանդես գալով տների միջև որպես կապող ցուցիչ: Բայց դրա հետ մեկտեղ կան հաղորդման առարկաներ, որոնք յուրաքանչյուր տան մեջ փոփոխվում են և դառնում տները կապող երկրորդ ցուցիչ: Հենց կապի այդ երկրորդ օղակի շնորհիվ էլ քառատողների միջև կապերի բնույթը բազմազան է դառնում և դրանց հաճախականության թուլացմամբ էլ որոշում ենք հատվածների սահմանները:

Լեյդ անցնենք «Ամպ-ավետարեք» պոեմի առաջին մասի առաջին բաժնի (1—13 քառատողեր) և երկրորդ մասի առաջին բաժնի (64—77 քառատողեր) վերլուծությանը:

Առաջին մաս, առաջին բաժին

Առաջին բաժինը կադմված է երկու հատվածից: Առաջին հատվածը (5 քառատող) բախտոնեղծի խոսքն է. յակշայի՝ ամպին հանդիպելուց առաջ տեղի ունեցած իրադարձությունների շարադրանքը, յակշայի և ամպի հանդիպումը:

Քառատողերը կապվում են կրկնակի շղթայական կապերով: 1, 2, 3 և 4 քառատողների կապող ցուցիչներից մեկը yakṣaḥ (1) «յակշա» բառն է և նրան փոխարինողները. yakṣaḥ (1) «յակշա» - - - sa kamī (2) «այդ սիրահարը» - - - rājarājasya anucaraḥ (3) «արքայից արքայի դրաները» - - - sa (4) «հա»: 1 և 2 քառատողերը կապող երկրորդ ցուցիչը ramaḥ և և -

⁶ Լեյդ հասկացությունը հիմնականում համընկնում է Ն. Ի. Ժինկինի օգտագործած «արտահայտության առարկա (սուբյեկտ)» հասկացության հետ (Н. И. Жинкин, Развитие письменной речи учащихся III—VII классов («Известия Академии пед. наук РСФСР», 1956, вып. 78, с. 146—147).

մադիրի» բառի փոխարինողն է - - - tasminnadrau «այդ լեռան վրա»։ 2, 3, 4 և 5 քառատողերը կապող երկրորդ ցուցիչը ամպ բառը և նրան փոխարինողները։ Առաջին կապող ցուցիչը 4-րդ և 5-րդ քառատողերի միջև pravxtliղ «լուր» բառի հոմանիշն է - - - sandesārthah «ուղիերձի իմաստը»։

Հատվածը սեղմ է. քառատողերի միջև կապերը սերտ են, օգտագործվում են անցյալ կատարյալի ձևերը՝ պատմական անցյալի գործառութայնությամբ։ Դրանք քառատողերի վերջում բերվող ասույթների մեջ ընդմիջվում են ներկա ժամանակով, որ ցույց է տալիս մշտապես տեղի ունեցող տևական գործողություններ ու եղելություններ, հաստատված հանրահայտ ճշմարտություններ։ 5-րդ քառատողի ստորոգյալը - - - yayāce «խնդրում էր» ակնկալում է յակչայի ասելիքի մեջբերումը։ Յակչայի խնդրանքն էլ կազմում է պոեմի հետագա բովանդակությունը։

Երկրորդ հատված։ 6-րդ քառատողից, յակչայի խոսքով, սկսվում է առաջին բաժնի երկրորդ հատվածը, որն արդեն կտրուկ տարբերվում է առաջինից։ Սկսվում է ուղղակի խոսքը, և յակչան դառնում է հաղորդող, իսկ ամպը՝ ընկալող։ Միաժամանակ սկսվում են օգտագործվել կոչականի ձևեր, երկրորդ դեմքի դերանուններ և բայի հրամայականի ձևեր։ 6-րդ քառատողը յուրատեսակ նախաբան է. յակչան իր հարգանքն է արտահայտում և միաժամանակ հաճոյախոսում է, որպեսզի ընկալողը (ամպը) չհամարձակվի խուսափել խնդիրը կատարելուց։ Խնդիրքի էությունը շարադրվում է հաջորդ քառատողում։

6-րդ և 7-րդ քառատողերը կապող ցուցիչ է երկրորդ դեմքի tvam «դու» դերանունը, որ ընկալողի (ամպ) արտահայտիչն է և առաջին դեմքի me «իմ» դերանունը՝ հաղորդողի (յակչա) արտահայտիչը։ Այսպիսով, ընկալողը միաժամանակ հաղորդման առարկա է դառնում (այսինքն այն առարկան, որի մասին խոսվում է հաղորդման մեջ) և այդպիսին էլ մնում է պոեմի առաջին մասի ընթացքում։ 7-րդ քառատողում առաջին անգամ հանդես է գալիս ամպի շարժման, ճանապարհի մոտիվը, և հիշատակվում է դիցաբանական Ալակա քաղաքը՝ ճանապարհորդության նպատակակետը։ Հաջորդ չորս քառատողերում (8, 9, 10, 11) յակչան, կարծես թե սիրաշահելով, համոզում է ամպին ճանապարհ ընկնել՝ ներշնչելով նրան, որ նրա ճանապարհորդությունը կլինի և՛ օգտակար (8, 10 քառատողեր), և՛ հաճելի (9, 11 քառատողեր)։

Եթե ուշադրությամբ ղնենք, այդ քառատողերը պահպանելով ընկալողի և հաղորդման առարկաներից մեկի ընդհանրությունը (ամպ բառը արտահայտվում է կա՛մ երկրորդ դեմքի անձնական դերանվամբ, կա՛մ բայի դեմքի միջոցով, և ենթակայի կա՛մ խնդրի դեր է կատարում), ունեն զուգահեռ կառուցվածք (հաղորդման երկրորդ առարկան յուրաքանչյուր քառատողում փոխվում է, կապի այլ տեսակները քառատողերի միջև բացակայում են)։

Ահա դրանց ընդհանուր սխեման.

- (8) tvam... prekṣiṣyante pathikavanitah...
քեզ... կնային պանդուխտների կանայք...
(9) seviṣyante... bhavantam balakam...
կուղեկցենք... քեզ կոունկները...

(10) ...drakṣyaśi bhiraṭjāyāṃ.

...կտեսնես եղբորդ կնոջը⁷

(11) ...sampatsyante... bhavato rājahamśaḥ sahayāḥ.

...ֆլամինգոները... քո ուղեկիցները կդառնան:

Բոլոր շորս քառատողերում ստորոգյալները միևնույն ժամանակային կարվածքում են, արտահայտված են կա՞մ ապառնիով՝ մոտակա ապառնիի իմաստով, կա՞մ (9-րդ քառատողում), ոճական բաղմազանության համար, հարաբերական ներկայով, դարձյալ մոտակա ապառնիի իմաստով: Շեղումները պատումից մեկնաբանության (8-րդ քառատող) կամ ասույթի (10-րդ քառատող) ձևով, միջանկյալ լինելով, ընդհանուր պատկերը չեն փոխում և չեն խտնագրում քառատողերի կառուցվածքի զուգահեռության ընկալմանը: Դրան նույնատում է և այն հանգամանքը, որ քառատողերը միմյանց կապվում են «Յ ռև» շաղկապող մասնիկով: Դրանով ընդգծվում է թվարկությունն այն փաստարկների, որոնք խոսում են հոգուտ ճանապարհորդության, հատվածին երգայնություն է հաղորդվում, ստեղծվում է յուրահատուկ ութմական պատկեր: Ահա քառատողերի թարգմանությունը.

(6) Գիտեմ քեղ՝ մեծն Ինդրայի ծառայիդ, ծնված Պուշկարների դերդաստանում, ուստի եկել եմ քեզ որպես հայցվոր...

(7) Դու թշվառների մխիթարությունն ես, ուստի լո՛ւր տաք սիրեցյալիս, զե՜ս՝ Ալակա...

Հաջորդ քառատողերը, որ կազմված են զուգահեռ նախադասություններից, կապվում են 7-րդ քառատողին հիմունքի հարաբերությամբ.

(չէ՞ որ) (8) պանդուխտների կանայք կնայեն քեզ, հառաչելով հուսալից

(9) և համբնթաց քամին կքշի քեզ, ուր կամենաս

և ձախից շատական⁸ քաղցր կծայնի հոգեհարազատ

(խսկ) կոունկները, իրենց սիրո պահն ականկալելով, կուղեկցեն քեզ երկնում.

(10) և եղբորդ կնոջը կտեսնես հավատարիմ ու զեռ ողջ,

(11) և ֆլամինգոները, լսելով քո որոտը, քո ուղեկիցները կդառնան մինչև Կայլասա...⁹

(12) (Դե ուրեմն) հրաժեշտ տուր սիրած մտերմիդ՝ բարձր լեռանը գրկելով...

12-րդ քառատողը կարելի է դիտել որպես նախկին շարադրանքի հետևություն: Բարենպաստ ուղեկից հանգամանքները նշելով, յակշան՝ համոզված, որ արդեն բավական սիրաշահել ու համոզել է ամպին, խնդրում է նրան հրաժեշտ տալ Ռամագիրի լեռանը և ճանապարհ ընկնել: Դա ընդգծվում է նաև բայք՝

7 Այսինքն՝ յակշայի կնոջը, Յակշան իրեն ամպի եղբայր է անվանում, որովհետև միայն եղբոր իրավունքով է, որ ամպը, առանց ավանդույթը խախտելու, կարող էր մտնել յակշայի կացարանը:

8 Հաստակա—թուշուն: Որոշ թուշունների և կենդանիների հայտնվելը ձախից բարի նշան էր համարվում:

9 Կայլասա—լեռ Հիմալայներում: Այդ լեռան փեշին է, իբր, գտնվում դիցաբանական Ալակա քաղաքը, ուր ապրում է յակշայի կինը:

եղանակի փոփոխությամբ. սահմանական եղանակը (պարզ ապառնին) փոխարինվում է հրամայական եղանակով, որն արտահայտում է կոչ --- āpṛc-chasva «հրաժեշտ տուր»:

Հաջորդ 13-րդ քառատողը նախորդի նկատմամբ ներհակական հարաբերություն ունի. 12-րդ քառատողում յակշան կոչ է անում ամպին հրաժեշտ տալ լեռանը, իսկ այստեղ վերապահությամբ նշում է.

(13) (բայց) նախ (այսինքն նախքան հրաժեշտ տալը և Ալակա թրուշելը—Վ. Ա.) լսիր այն ճանապարհի նկարագրությունը, որ հարմար է քո ուղևորության համար, հետո կլսես իմ ուղերձը:

Այս քառատողը հետագա պատումի համառոտ ուրվագիծն է, մուտք, որի բովանդակությունը հետո է բացահայտվելու իսկապես, յակշան նախ ամպին նրա ճանապարհն է նկարագրում, ապա հաջորդում լուրը: Բնագրում օգտագործված tāvat մակբայը ունի «նախքան» իմաստը և իրականում ընդգրկում է նախորդ քառատողի ողջ բովանդակությունը: Տեղի է ունենում բլոկների առձգում, շղթայական կապ է ապահովվում նախորդ քառատողի ամբողջ բովանդակության հետ:

Այսպիսով, 13-րդ քառատողը և՛ ամբողջ ներածական բաժնի եզրափակումն է, և՛ ընդհանրացնող մուտք է յակշայի ողջ հետագա խոսքի համար:

Այժմ անցնենք պոեմի մեկ այլ բաժնի վերլուծությանը, որն իր կառուցվածքով միանգամայն տարբեր է վերը դիտարկված բաժնից:

Երկուրդ մաս, առաջին բաժին

Առաջին հատված: Առաջին և երկրորդ մասերի սահմանը գտնվում է 63—64 քառատողերի միջև: 64-րդ քառատողը, ինչպես և հաջորդ 7 տները մինչև 71-ը ներառյալ, 63-րդ քառատողում գտնվող գլխավոր նախադասության հետ մեկտեղ կազմում են բարդ ստորադասական նախադասություն՝ բազմակի որոշիչ երկրորդական նախադասություններով, որոնցից յուրաքանչյուրը մի քառատող է գրավում: Թեև շարահյուսորեն 63-րդ ու 64-րդ քառատողերը միևնույն նախադասության մասերն են, այնուամենայնիվ պոեմի առաջին և երկրորդ մասերի սահմանը ճիշտ է ընտրված: Սկսվում է նոր թեմա՝ հարստության աստված Կուրբրայի նստավայրի նկարագրությունը: Այդպիսով 63-րդ քառատողում ամպը հասնում է իր նպատակակետին և դրանով ավարտվում է պոեմի առաջին մասը: Իսկ քաղաքի նկարագրությամբ սկսվում է պոեմի երկրորդ մասը: Այսինքն առաջին և երկրորդ մասերի սահմանադատման մեջ կարևոր է շարժման ու հանգստի վիճակի նկարագրության հակադրությունը: Հենց այն պատճառով, որ հատվածը բարդ նախադասության մասեր ներկայացնող քառատողերի ամբողջություն է, որոնք միայն 63-րդ քառատողի հետ են ավարտված նախադասություն կազմում, այս հատվածի վերլուծությունը տարբերվում է նախորդ բաժնի վերլուծությունից:

Ակնբերության համար բերենք 63, 64, 65 քառատողերը:

tasyotsaṅge prapayina iva srastagāṅgādukūlaṃ
na ivam dr̥ṣṭva na punaralakāṃ jñasyase kāmācārīn

ya vah kale vahati salilodgāramuccervimāna
muktajalagrathitamalakam kaminīvabhraṇḍam, (63)

vidyutvantam lalitavanitah sendracapam sacitrah
sangitāya prahatamurajah snigdhaḡambhīradhoṡam
antastoyam maḡimayabhuvās tuḡḡamambhralihagrah
prāsādstvaḡ tulayitumalam yatra taistairviśeṡair, (64)

haste lilakamalamalakam balakundanuviddham
nīta lddhraprasavarajasa paḡdutāmananaśrīh
cūḡpāṡe navakuruvakam caru karne śrīṡam
simante ca tvadupagamajam yatra nīpam vadhunam, (65)

Լանջին այդ լեռան, ինչպես սիրածին, քնքուշ հպվել է չքնաղ Ալական,

Որ դեն է նետել զգեստը սնդուսե՝ Գանգեսը լուսեղ,

Որ գմբեթներին իր Լրկնասլաց ապարանքների ամպակույտեր է կրում
անձրևին,

Ասես թև ցանցով մի մարգարտահյուս իր գանգուրներն է կապել
գեղուհին. (63)


Ուր ամպածրար աշտարակներով զղյակների մեջ ամեն ինչ ասես մըր-
ցում է քեզ հետ,

Հրայրբոտ կանայք՝ քո կայծակի հետ, ծիածանիդ հետ՝ նկարները վառ,
Ջնգուն երգերը ու թմբուկների խորունկ զարկերը՝ խուլ որոտիդ հետ,
Վճիտ ջրիդ հետ՝ նրանց հատակներն աղամանդահուռ. (64)


Ուր կանանց ձեռքին քնքուշ լոտոսն է, իսկ խոպուպներին՝ հասմիկը
նրբին,

Լողհրայի փոշին ղեմքերը նրանց օժտել է անչափ դյութիչ դալկությամբ,
Լանջի փնջիկին անմոռուկներ են, չքնաղ ունկերին սիրիսն է ժպտում,
Մաղաբաժանն էլ նիպան է պճնել, որ ծաղկում է միշտ քո գալստյան
հետ... (65)

Ուշադրություն դարձնենք քառատողերում yatra «ուր» հարաբերական
մակբայի տեղադրությունը, որի միջոցով որոշիչ երկրորդական նախադասու-
թյունները միանում են զլխավորին (դժ. 1):



Ինչպես երևում է գծապատկերից, yatra հարաբերական մակրայի տեղադրությունը բառատողերում ենթարկվում է որոշակի օրինաչափության, yatra բառը կազմված է երկու վանկից, որոնցից առաջինը երկար է, իսկ երկրորդը՝ կարճ¹⁰, Ուստի, տողում այդ բառի համար ամենահարմար դիրքն այն է, երբ երկար վանկին հաջորդում է կարճ վանկ (դժ. 2):



Գժ. 2

«Մանդակրանտա» չափով գրված տողում երեք այդպիսի դիրք կա. անմիջականորեն երկրորդ հատածից հետո, 14 ու 15-րդ, 16 ու 17-րդ վանկերի վրա: Երկրորդ հատածից հետո գտնվող դիրքը բանաստեղծը օգտագործում է 5 անգամ (64, 65, 69, 70, 71-րդ բառատողերում). 14 ու 15-րդ վանկերի դիրքը մեկ անգամ (68-րդ բառատողում): Երրորդ դիրքն այս հատվածում բանաստեղծը չի օգտագործում: Երկու դեպքում է միայն (66 ու 67-րդ բառատողերում) Կալիդասան հարաբերական բառով սկսում բառաստղը, որի համար անհրաժեշտաբար երկարացրել է երկրորդ վանկը: Այդ պատճառով նա մի դեպքում (66-րդ բառատող) օգտագործում է ներգոյական հոլովով yasyam «որի մեջ» հարաբերական դերանունը, իսկ մյուս դեպքում՝ անմիջապես yatra-ից հետո օգտագործում է Strīnam բառը, որն սկսվում է բաղաձայնների կուտակումով, այդպիսով՝ երկարացնելով երկրորդ վանկը (yatra strīnam):

Հարաբերական պարբերությի երկրորդ և երրորդ քառատողերում (64, 65-րդ) yatra բառը գտնվում է չորրորդ տողի երկրորդ հատածից հետո: Այդ երկու քառատողերում թվարկվում են բաղմակի անդամների զույգեր: 64-րդ քառատողում թվարկվում են համեմատության առարկայից ու համեմատության պատկերից կազմված զույգեր (ենթակա ու խնդիր), 65-րդ քառատողը նշանակալից է նրբին կշռույթով. առաջին տողը գրավում են երկու տարբեր չափի կարճ նախադասություններ, երկրորդ տողը՝ մի երկար, երրորդը՝ հատածով անջատվող երկու կարճ և չորրորդը՝ մեկ երկար նախադասություն: Դրանք բոլորը անվանական նախադասություններ են, որ թվարկում են Ալակայի կանանց զարդարանքները: Երկու քառատողերն էլ միատեսակ թվարկող հնչերանգ ունեն և yatra բառը երկուսում էլ միևնույն դիրքում է: 63-րդ քառատողի որոշիչ երկրորդական նախադասության հետ դրանք կշռույթային մի ամբողջություն են կազմում՝ միանալով թվարկող հնչերանգով ու հարաբերական բառի վերջավոր դիրքով:

66-րդ և 67-րդ քառատողերում հարաբերական բառը քառատողի սկզբում է: Այդ քառատողերը, ինչպես և 68-րդը, տարբերվում են առաջին երկուսից իրենց ներքին կառուցվածքով: Այստեղ ունենք երկրորդական նախադասություններ, որոնք ընդարձակվում են մակրայական, դերբայական կամ բահուլիհի¹¹ դարձվածներով: Այդ կշռույթային և շարահյուսական հատվածը

¹⁰ Երկար են այն վանկերը, որոնք կամ երկար ձայնավոր ունեն, կամ էլ կարճ ձայնավորին հաջորդում են 2 և ավելի բաղաձայն: Մեկ երկար վանկը բաղկացած է երկու կարճ վանկից:

¹¹ Բահուլիհի—որոշիչ բառը բառ, որն իր բաղադրիչների լրացումներով հանդերձ կազմում է ընդարձակ դարձվածներ:

նյորափակում է 68-րդ քառատողը, ուր yatra-ն գտնվում է երրորդ տողի 14—15-րդ վանկների վրա: Հարաբերական բառի դիրքի այդպիսի փոփոխությունը բաղմադրան է դարձնում կշռույթային պատկերը: Այդ երեք քառատողերի՝ մի կշռույթային-շարահյուսական ամբողջության մեջ միավորվելուն նպաստում են ինթակաների և ստորոգյալների հոգնակի թիվը, նաև ստորոգյալները, որոնք արտահայտված են սովորական ներկայի իմաստ ունեցող ներկա ժամանակի ձևերով:

Դրանց հետևում են ևս երեք քառատողեր (69, 70, 71), որտեղ yatra բառը գտնվում է առաջին տողի երկրորդ հատածից հետո: Մի կշռույթային-շարահյուսական ամբողջության մեջ այդ քառատողերի միավորմանը նպաստում է նաև ենթակայների ու, համապատասխանաբար, ստորոգյալների եզակի թիվը, որով այս հատվածը հակադրվում է նախորդին: Այսպիսով, համանման կառուցվածք ունեցող քառատողերը հերթադալվում են այլ կառուցվածքի տների հետ, որպեսզի միօրինակությունը, որ որոշակի սահմաններում հաճելի է, չհոգնեցնի ընթերցող-ունկնդրին:

Երկրորդ հատված: 72-րդ քառատողով սկսվում է Ալակային նվիրված բաժնի երկրորդ հատվածը՝ յակշայի կացարանի նկարագրությունը: Այստեղ հաճախ են անվանական նախադասությունները, որոնց գոյականական ենթականերն ունեն տեղի պարագաներ: Այդ նախադասությունները, որ հաղորդում են ենթակայի որևէ տեղում գտնվելու մասին, հերթադալվում են այնպիսի նախադասությունների հետ, որոնց ստորոգյալը արտահայտված է սովորական ներկայի իմաստ ունեցող դիմավոր բայի ներկա ժամանակով: Ինչպես նախորդ հատվածներում, այնպես էլ այստեղ ամպը միայն ընկալող է և որպես հաղորդման առարկա (գործող անձ) է հանդես գալիս միայն հատվածի վերջին քառատողում (77): Հատվածի յուրաքանչյուր քառատողում նկարագրվում է յակշայի դաստակերտի որևէ նոր առարկա, իսկ հաջորդ քառատողում դրա (դերանվանական, համանշային և այլն) կրկնությամբ քառատողը չդթայակցվում է նախորդին:

(71—72) alakām «Ալական» — tatra «այնտեղ»

(72—73) udyāne «այդում» — asmin «ներս մեջ»

(73—74) vāpī «ըճակը» — tasyāstīre «ներս տփին»

(74—75) kṛīdāsailaḥ «Չվարճանքների բլուրը» — atra «այստեղ»

(75—76) aśokaḥ, keśaraḥ «աշոկա, կեշարա ծառերը» — tanmadhye «ներանց միջև»:

Յակշայի տունը նկարագրող հատվածն ավարտվում է 77-րդ քառատողով, որը կապակցվում է բոլոր նախորդ քառատողների հետ: ebhiḥ lakṣaṇaiḥ «այս նշաններով» ցուցիչն ընդգրկում է նախորդ քառատողերում նկարագրված և յուրաքանչյուր հաջորդ քառատողում տեքստի կապակցման համար կրկին յիշատակված նոր առարկաները: Միաժամանակ նախորդ առարկաներին միանում են ևս երկուսը. sañkha padmau «խեցի և լոտոս» (որ նկարված են կաշարանի դռան երկու կողմերում): 77-րդ քառատողը կարելի է թարգմանել այսպես.

Այդ նշաններով, արտումդ պահած, դու կճանաչես.

Մեկ էլ տեսնելով դուան վերևում այլ երկու պատկեր՝ լուտոսն ու խեցին.
Կտցարանը իմ, թեկուզ և խամրած իմ բացակայությունից:

Զէ՞ որ լուտոսի գեղեցկությունն էլ իսպառ խամրում է արևամուտին:

bhavanam «տուն, կացարան» բառը lakṣayethaḥ «կճանաչես» ստորոգյալի խնդիրն է: Հատվածի և բաժնի ավարտն ազդարարվում է ընդհանուր ժամանակային հարաբերակցության փոփոխությամբ. նկարագրական ներկայից՝ ապառնի:

Սովորաբար «Ամպ-ավետաբեր» պոեմն ընթերցելիս ու վերլուծելիս յուրաքանչյուր բառատողն անկախ ամբողջություն է դիտվում, նրանց տրամաբանական կապն ուշադրության քիչ է արժանանում: Կառուցվածքային վերլուծությունը հնարավորություն է տալիս ճիշտ ըմբռնելու ու մեկնաբանելու հեղինակի մտքի զարգացման տրամաբանությունը, առանձին բառատողներ իմաստն ու զրանց կապակցվածությունը:

Վերլուծության ընթացքում երբեմն հնարավոր է դառնում անմիջականորեն հաղորդակցվել բանաստեղծի ստեղծագործական պրոցեսի զաղտնարաններին, գիտակցությամբ ընկալել ենթագիտակցությամբ կառավարվող ստեղծագործական օրինաչափությունները (օրինակ՝ բանաստեղծի կողմից շարահյուսական կշռույթի նրբին զգացողությունը Ալալա քաղաքը նկարագրող հատվածում և այլն): Պոեմի կառուցվածքի վերլուծությունը օգնում է նաև բացահայտելու հեղինակի գեղարվեստական նպատակադրումը, հասկանալու բանաստեղծական երկի կշռույթային, շարահյուսական և ոճաիմաստային կողմերի սերտ կապն ու պայմանավորվածությունը:

СИНТАКСИЧЕСКИЙ СТРОЙ ПОЭМЫ КАЛИДАСЫ «ОБЛАКО-ВЕСТНИК»

ВАРАГАНУШ АРАКЕЛЯН

Резюме

Анализ синтаксического строя поэмы «Облако-вестник» великого древнеиндийского поэта и драматурга IV—V вв. Калидасы преследует две цели: 1. исследовать типы синтаксической связи между строфами; 2. показать границы отдельных фрагментов, в которые объединяются строфы.

На материале двух синтаксически разнообразно построенных отрывков—первого раздела первой части (1—13 строфы) и первого раздела второй части (64—77 строфы)—наглядно можно проследить процесс анализа синтаксического строя поэмы. Благодаря синтаксическому анализу становится возможным интерпретировать логическую связь строф, раскрыть художественную цель поэмы, тесную связь и взаимообусловленность ритмического, синтаксического и стилистико-семантического планов поэтического произведения.